ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2015, 68, № 1, 102-104

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

ԱԼԼԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
(1936 – 2013)

Անցավ շուրջ մեկ տարի, ինչ կյանքից անսպասելի հեռացավ Հայաստանի երկրաբանության, մասնավորապես՝ հրաբխականության և ապարագիտության ուսումնասիրման ասպարեզներում մեծ ավանդ ներդրած, վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի նվիրյալներից մեկը՝ ավագ գիտաշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածու Ալլա Խաչատուրի Մնացականյանը:

Ա.Մնացականյանը ծնվել է Ստեփանավանում 1936թ. հուլիսի 6-ին, ծառայողների ընտանիքում: (Վախճանվել է 2013թ. դեկտեմբերի 24-ին, Երևանում):

1958թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը և նույն տարում աշխատանքի անցել ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում, որտեղ աշխատել է մինչև իր կյանքի վերջը:

1958թ.-ից սկսած նա իր ողջ կյանքն ու գործունեությունը, կապելով ինստիտուտի հետ, նվիրաբերել է Հայաստանի՝ գլխավորապես մեզոզոյան հասակի հրաբխածին գոյացումների ուսումնասիրության խնդիրներին:

Ա.Մնացականյանի հետազոտությունների շնորհիվ Հայաստանի հյուսիսում՝ Քուռ գետի ավազանի սահմաններում, մասնավորապես Իջևանի ու Շամշադինի շրջաններում (Տավուշի մարզ), բացահայտվեցին լայն տարածում ունեցող ստորին և հիմնականում վերին կավճի հասակի հրաբխածին գոյացումների առանձնահատկությունները և առաջացման օրինաչափությունները: Առաջին անգամ հատուկ ուսումնասիրության առարկա հանդիսացան այդ առաջացումներում գլխավոր ապար կազմող միներալների և նրանց համակցությունների քիմիական, սպեկտրալ, ռենտգենաչափական և զոնալակության հատկանիշները, ինչը թույլ տվեց հիմնավորել նրանց առաջացման մի շարք պետրոլոգիական խնդիրներ:

Ճանաչված ռուս գիտնական, պրոֆեսոր Մ.Ա.Ֆավորսկայայի ղեկավարությամբ իրականացված հետազոտությունների արդյունքները նրա կողմից ամփոփվեցին և ներկայացվեցին թեկնածուական ատենախոսության տեսքով, որը 1964թ. հաջողությամբ պաշտպանվեց

Մոսկվայում, ապա հրատարակվեց որպես մենագրություն (համահեղինակությամբ). “Связь мелового и палеогенового вулканизма Армении с типами развития геосинклинальных прогибов” (Մոսկվա, “Նաուկա”, 1968):

Հետագա տարիներին Ա.Մնացականյանի կողմից նույն ջանասիրությամբ շարունակվեցին Հայաստանի տարբեր շրջաններում՝ Սյունիքում, Վեդի գետի և Սևանա լճի ավազանների սահմաններում տարածված կավճի հասակի հրաբխածին գոյացումների ուսումնասիրությունները: Արդյունքներն ամփոփվել են ”Геология Армянской ССР, Петрография, вулканические породы” (ԳԱ հրատ., Երևան, 1970) բազմահատորյակի 4-րդ հատորում, ինչպես նաև “Петрология верхнемеловой вулканической серии северной Армении” (ԳԱ հրատ., Երևան, 1981) մենագրության մեջ:

Ա.Մնացականյանի աշխատանքներում առանձնակի ուշադրության են արժանացել կավճի հասակի գոյացումներում լայն տարածում ունեցող բենթոնիտային կավերի և ցեոլիտների միներալային և ստրուկտուրային առանձնահատկություններին, նրանց առաջացման պայմաններին առնչվող, ինչպես նաև՝ կիրառական նշանակություն ունեցող հարցերը:

Վերջին տասնամյակներում Ա.Մնացականյանի հետազոտություններն ուղղված էին հիմնականում Հայաստանի տարածքի վերին պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխածին գոյացումների երկրաքիմիական, պետրոգրաֆիական, միներալաբանական և պետրոլոգիական առանձնահատկությունների բացահայտմանը՝ ժամանակակից միջազգային մոտեցումների պահանջներին համահունչ: Արդյունքում առաջադրվեցին նոր վարկածներ Հայաստանի նորագույն հրաբխականության զարգացման օրինաչափությունների վերաբերյալ:

Ա.Մնացականյանի գիտական հետաքրքրությունների շրջանակներում լայն տեղ է զբաղեցրել նաև պետրոգրաֆիական մանրադիտակային ուսումնասիրությունների մեթոդների կիրառումը հնագիտական հետազոտությունների բնագավառում: Դրանք ուղղված էին նաև պեղումների ժամանակ հայտնաբերված կավային իրերի պատրաստման համար օգտագործված բնական նյութերի հնարավոր աղբյուրների աշխարհագրության երկրաբանական մոտեցումներով բացահայտմանը, ինչը մեծ նշանակություն ունի նախապատմական դարաշրջանին վերաբերվող որոշ հարցերի ճշտգրտման համար:

Ա.Մնացականյանի բազմամյա գիտական հետազոտությունների արդյունքներն ամփոփված են շուրջ 90 գիտական հոդվածներում և 6 մենագրություններում, որոնք հրատարակվել են հանրապետական և միջազգային գիտական մամուլում, ինչպես նաև ներկայացվել են տարբեր գիտաժողովներում:

Հանդիսանալով հմուտ մասնագետ նշված ասպարեզներում, նա իր գիտելիքներով պատրաստակամությամբ կիսվում էր բոլորի հետ և առանձնակի հոգատարությամբ փոխանցում էր իր հարուստ փորձը

երիտասարդ մասնագետներին, կազմակերպելով նրանց համար տեսական և գործնական դասընթացներ:

Ա.Մնացականյանը ինստիտուտի կոլեկտիվում սիրված և մեծ հարգանք վայելող համեստ, բազմակողմանի զարգացած և բարեկիրթ խառնվածքի տեր, գիտությանն ու ընտանիքին անվերապահորեն նվիրված անձնավորություն էր: Նրա հիշատակը վառ կմնա գործընկերների և նրան ճանաչողների հիշողություններում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ "Գիտություններ Երկրի մասին" տեղեկագրի խմբագրություն